# ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա. ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ  ԹԻՒ 7  ԴԵԿՏԵՄԲԵՐ 1




## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

ԽՕՍՔ Նշանաւոր Եւրոպա  Մեղեդի  Իւէ







2) Ո՛ն, բարձրացուր գինւոյդ բաժակ.
Ահա խմն ալ բարեկամ.
Զարնենք բաժակ տանք երկար կեանք
Սեղանակցաց հազար ամ:
Զուարթութիւն աս կը բերէ,
Գինին տըխրած ոգիներէ
Մարդիկ կ'ընէ զուարթ.
Ա՛ղէ ընկեր խմէ արդ:

3) Տեսա՛ր ուրեմն, խնդումերես
Թախծութենէդ եղար արդ
Գինին կ'ելլէ ուր ապարէշ
Խըրախութեանց կ'ըլլայ զարդ:

Հապա մանուկ լեցուր նորէն
Սեղանակցացըս համօրէն.
Արդ վայել է խընդալ.
Ընկեր պարպէ մէյ մ'ալ:

# ԱՌ ՍԷՐ ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՕՍՔ Ս. Գ. Գ. Փափազեանց

ԵՂԱՆԱԿ Մանաս էֆէնտիի

ԲԻՄՆՕՑԻ կարգադրիչ Տիգրան Չուխաճեան





Օտար երկիրս թափառած ,
Անքուն աչօք կամ ցաւած ,
Իմ սիրելույս կարօտցած ·
Չըկայ մէկն որ կարեկից ,
Ըլլայ ցաւած իմ սրտիս ,

Ով հայրենիք իմ սիրուն ,
Ահ , տոչորէ զիս անուանդ ·
Արդեօք պիտի չտեսնեմ ,
Քու լուսաւոր զուարթ դէմքդ ·

Հառաչանք բխեր 'ի սրտէս ,
Արտօսր հեղում աչերէս ,
Իմ սիրելույս կարօտցած ·
Չեն ինձ երբէք մխիթար ,
Ոսկի պատիւ սէր օտար ·

Այլ ես անոր սիրոյն զոհ ,
Ըմպեմ զամէնքն սրտով գոհ ,
Միայն թէ յոյս մ'ունենամ ,
Իմ սէրս տեսնել միանգամ ։

# ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Տես Թիւ 1 . 2 . 3 . 4 . 5 . 6 .

Առաջին Թուոյն մէջ գրուած բոլոր կիսաձայները ինչպէս որ տեսանք իրենց համար յատկացեալ անուններ ունէին և նոյն անուններովը կը կոչուէին , բայց զանոնք աւելի դիւրիմաց ընելու համար պէտք չէ որ ամէն մէկ կիսաձայնին զատ զատ անուններ տանք այլ ամէն կիսաձայն պէտք է այս երկու անունովը կոչուին վերնախաղ կամ Ներքնախաղ ։ կիսաձայն մը երբ որ իր աստիճանին տեղը կը գործածուի նոյն ամբողջ աստիճանին անունը տալով պէտք ընենք վերնախաղ որ ամբողջ ձայնէն կէս ձայն վեր կը ցուցընէ , այն կիսաձայնը որ իրմէ վեր աստիճանին տեղը կը գործածուի նոյն վերի աստիճանին անունը տալով պէտք ընենք ներքնախաղ որ այն աստիճանէն կէս աստիճան վար կնշանակէ ։ ինչպէս .

( ) փա վերնախաղ ( է )։( վէ վերնախաղ ) ( բէ )։( խօ վերնախաղ ) ( նէ )։են

( )վէ։( բէ ներքնախաղ )։( խօ ) ( նէ ներքնախաղ )։( պա ) ( փու ներքնախաղ )։են

### ՕՐԻՆԱԿ ՎԵՐՆԱԽԱՂՆԵՐՈՒ



### ՕՐԻՆԱԿ ՆԵՐՔՆԱԽԱՂՆԵՐՈՒ



Շարունակելի

---

# ՀԱՄԱՌՕՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Տես Թիւ 1 , 2 , 3 , 4 , 5 , 6 ,

Հետևեալ օրինակին վրայ կը տեսնուի թէ տօն ուր պէտք ըլլայ երբոր մէկ երկու երեք են դիեզով եղած ատենը




Հետևեալն ալ կը ցուցունէ սիկերը բեմոլ ունեցող տողաշարներուն վրայ տօն ուր կենալը




Շարունակելի։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ

Գ. Յ. Երանեան
Ն. Ա. Թաշճեան } Դասատուք Երաժշտութեան Ազգային դպրոցաց

# ՆՈՒԷՐ ԱՌ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

## ՈՂՋ. ԼԷՐ ՔՆԱՐ

Ա. ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԹԻՒ 8 1861.
ԴԵԿՏԵՄԲԵՐ 15

ԽՕՍՔ
Նշան , Զօհրապեան

ԵՂԱՆԱԿ
Տիգրան ; Չուխաճեան
















Վերջ

※ Թէ Հայկազանց ոսկի դարուն ոսկի քնարք լռեցին
Եւ թէ հայուն անմխիթար հեծել պետք էր դարերով,
Ահա թող դադրին արցունք հերիք լանք այս նոր քնարին
Զոր նոր երգինք կը ղողդարեն ուրախութեան թելերով։

Ողջ լեր քնար ձայն տուր թշուառ Հայաստանի զաւակաց
Որոնց բարձր է ու Արարատն մեր հայրենեաց յիշատակ,
Մինչեւ կենար և թող խայտան ոսկերք հայոց դիւցազանց.
Լուր տար մեզ թէ հոս հոս հոս ըսէ թէ ողջ են դեռ հայք։

※ Հայկայ պանդուխտ զաւակներուս կանչէ երգերդ հայրենի
Թող յաւիտեան ձայնդ անուշիկ հնչէ հնչէ հայերուն,
Եւ թէ լսեն ամեն ազգեր եթէ աշխարհքն ալ անցնի
Ով Հայաստան Սուրբ հայրենիք մեր հայրենիքն երգէ դուն։

Մենք այն երկրին,
Զաւակներն ենք,
Որուն նմանն
Ալ չկայ։

Երկրին որուն,
Գլխուն եկածն,
Ուրիշին չէ,
Պատահած։

ՏՆՕՐԷՆՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ

Գ. Յ. Երամեան ⎫ Դաստառուք
Ն. Ս. Թաշճեան ⎭ Երաժշտուէ Ազգայինդպրոցաց